ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«30» օգոստոս 2024թ. № 034/29-4842

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սպիտակ համայնքի Ջրաշեն բնակավայրում գտնվող, 06-095-0274-0005 կադաստրային ծածկագրերով հողամասը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24112023-06-0045 վկայականի սեփականության իրավունքով պատկանում է Սպիտակ համայնքին:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ տեխնիկական տնօրեն Գ.Գևորգյանը դիմել է Սպիտակի համայնքի ղեկավարին, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-095-0274-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքի հողամասի նպատակային նշանակության փոփոխության հարցում աջակցություն ստանալու համար բջջային ցանցի ծածկույթի բարելավման և բջջային կապի նոր կայանների տեղակայման նպատակով:

Անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն՝ 06-095-0274-0005 կադաստրային ծածկագրով, 0,012 հեկտար մեկերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակության հողամասը փոփոխել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կապի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա.ՄԱԹՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Դարչինյան
Հեռ. 0255 2 25 00